

յօղու ասհմանադրութեան: Կառավարութիւնը տատանում է ձեռք առնել լճուական միջոցներ: Զօրքերին հրամայուած է խոյս տալ ընդհարումներէց: (Ռ. Ս.)

Թաւրիզ, 5 նոյեմբերի

Այսօր Էյն-Ուղ-Գօլլէի բանակն են հասել 200 բախախարներ: Յեղափոխականների խուզարկու խմբերը անցել են Էյն-Ուղ-Գօլլէի ետևի կողմը: Վիզիլ-Ջիմէյդում, մուշաէիզներէ իջեանում, բռնուած են երկու ֆիդայիներ: Նոյնը տեղի է ունեցել նաև Բամմինջում: Էյն-Ուղ-Գօլլէն ուղարկեց առաջին շրջագայող խումբը՝ կօզակներէց: (Պ. Բ.)

Թաւրիզ, 31 հոկտեմբերի

Բողոքներ Մուժամբարի դեպքերի առթիւ: Մուժամբարից եկած նոր սուրհանդակները, ինչպէս և երեկ ճանապարհուած՝ խմբի գրած նամակները հաստատում են երեկ առաւօտեան ստացուած լուրերը. Գիւզի մի մասն թալանուած է: Կրեկուայ գնացած մօտ 50 հողինոց խմբից բացի, այսօր ևս Մուժամբար ճանապարհուեց սահմանադրականների 30 հողինոց հեծեալ խումբը: Գնալ ցանկացողներէ թիւը շատ է, բայց այսբանն էլ բաւարար է համարուում: Այսօր, վաղը մեծ կռիւ է սպասուում այնտեղ:

Թեմական խորհուրդն էլ իր տեսակի օգնութիւնն Մուժամբարին հասցրած լինելու նպատակով, երկու պատգամաւոր է ուղարկել, այսօր Վասպինջ՝ Էյնը-Գօլլէի մօտ, բողոքելու գիւզն աւերելու փաստի դէմ և միևնոյն ժամանակ առանձին գրութիւններով բողոքել է հիւպատոսներին:

Պատգամաւորները երեկոյեան բանակից յետ դառնալով, յայտնում էին, որ Էյնը-Գօլլէն հաւատացրել է, որ տեղեկութիւն չունի այդ մասին և կասկած յայտնելով ձիաւորների թնդանօթ ունենալու առթիւ, խոստացել է շուտով մարզիկ ուղարկել Մուժամբար և հրոսակներին հրամայել, կողպուտները գիւղացոց յանձնելով, յետ քաշուել գիւղից: Նոյն խոստումներով վստահացրել է և ռուսական հիւպատոսարանի առաջին թարգմանին, որ կրկնակի բողոքներով էր ներկայացած եղել նրան. մէկը թեմական խորհրդի և միւսը ռուսահպատակ գիւղատիրոջ կողմից:

Պատգամաւորներն ի միջի այլոց պատմում էին և բանակի գրութեան մասին: Ըստ նրանց՝ զօրքի թիւը հասնում է մինչև 5000 բախախարի, Շահուօլան, Ղազուինի ձիաւորների: Նոր հասել են 400 կօզակ, 4 ռուս օֆէցէրներով: Զօրքը մի քանի արդահարուած թնդանօթներ ունի: Էյնը Գօլլէի փակումով,

սահմանադրականներն ու շահութիւնը այլ հողմ գարձնի և ու-
թերը ցրելով ու ջլատելով՝ քաղաքի վրայ յարձակում գործի:
Սահմանադրականները լաւ հասկանալով այդ խորամանկու-
թիւնը, նրա նպատակն ի դերև հանելու աշխատանքը չեն զլա-
նում ի գործ դնել և շրջակաները փոքրաթիւ խմբեր են միայն
ուղարկում. իսկ քաղաքի ծայրերի գիւրջերը՝ նրբէք անպաշտպան
չեն թողնում:

Խօսում են նաև Մակուի Սարգսի և Եղօ խանի մատ-
դրութիւնների մասին. իբր թէ պարտութիւնների վրէժն լու-
ծելու համար, ցանկութիւն ունին Գլխմանի վրայ յարձակուե-
լուց յետոյ, նորից քաղաքի վրայ գալ: Այսպէս թէ այնպէս
միջնորդար դեռ վերջնականապէս պարզուած չը լինելով, են-
թադրել է տալիս, որ նոր գէպքերի նախօրեակին ենք գտնւում:

Յ. Գ. Առում են, որ ռուսաց հիւպատոսի բողոքի հիման
վրայ Մարանդի խճուղին բացուել է ապրանքների փոխադրու-
թեան համար: Երեկ և այսօր այստեղից դէպի Կովկաս բեռներ
են ուղարկուել: Մասնաւորապէս ռուսահայատակները ընտա-
նիքներով քաղաքից հեռանալը շարունակում է: Ոչխարային
հետևողութեամբ, հայերից շատերն էլ փախչում են. . .

(Գ.)

2000 Ոսկիի պէտական նպասք.

Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ գրուած բլլալով Ելմտա-
կան նախարարութեան, որպէս զի յանուն գաւառի կարօտելոց
2000 ոսկի տրուի, Ելմտական նախարարն հաղորդած է Պատ-
րիարքարանի որ 500 ախան ոսկի մճարելով, մէկ ամսուան մէջ
պիտի լրացնէ 2000 ոսկիի գումարը, և առաջին մճարումը, 500
ոսկի քրած է արդէն: Այս գումարն յանձնուեցաւ Պատրիար-
քարանին, որ Քարակէօզեան դրամատունը թողուց ի պահ, անկէ
մաս առ մաս գաւառները զրկելու համար:

Մինչև հիմայ Պատրիարքարանի միջոցաւ Պոլիս Էկող գաղ-
թականներու 5000 ոսկի տրուած է, հետևաբար այս 2000 ոսկիի
գումարն ամբողջովին պիտի յաւակացուի գաւառներու կարօ-
տելոց: